պահանջեցին աւարից, Նոքա հրաժարեցին տալ. բանը այնտեղ հասաւ, որ Հաբիբ եւ Սալման խօսքերով միմեանց անպատուեցին, իսկ Սալմանին մուսլիմներից ոմանք սպառնացին սպանել. (այդ առթիւ) բանաստեղծը ասաց՝

Եթէ սպանէք Սալմանին, մենք կը սպանենք ձեր Հաբիբին,

Եւ եթէ գնաք Իբն Ալֆֆանի մօտ,[1] կը գնանք եւ մենք։[2]

Հաբիբ գրեց Օսմանին դէպքի մասին, եւ նա հրամայեց Նորան աւարից հարուստ բաժին տալ Ասորիներին, իսկ Սալմանին՝ որ նա ասպատակ առնէ Աղուանից երկիրը։ Ոմանք կը պատմեն, որ Սալման ի. Ռաբիյա արշաւեց Հայաստանի վերայ Օսմանի ամիրապետութեան ժամանակ, գերեց (ժողովուրդը), աւարի առաւ եւ եկաւ Ալվալեդ ի. Օքբայի մօտ. ըստ աւանդութեան Մոսուլի բնակիչների, այս բանը տեղի ունեցաւ 25 թուականին։[3] Այստեղ Նորան հասաւ Օսմանի նամակը թէ՝ ինչպէս Մուաւիան Նորան կը հաղորդէ՝ Ցոյնք կը սպառնան մուսլիմներին ահագին բազմութեամբ, խնդրած էր Նորան օգնութեան ուղարկել 18.000 զօրք։ Օսման ուղարկեց այս գունդը Սալման ի. Ռաբիյա ալ-Բահիլի հրամանատարութեան

---

1 Ամիրապետը այսպիսի դէպքերում գլխաւոր դատաւորը կը հանդիսանար։

2 Արաբացի բանաստեղծները, որոնց թւում հազւագիւտ չէին նաեւ կանայք, սովորաբար կ'ուղեկցէին պատերազմողներին արշաւանքի ժամանակ եւ իրանց երգերով կը խրախուսէին նոցա։

3 Ուրեմն 647 թ. ինչպէս դեռ կը տեսնենք, այս արշաւանքն առաջինը չէր, այլ երկրորդն էր Իյադ ի. Ղանմից յետոյ։ Մինչ առաջին աւանդութիւնն Հաբիբ ի. Մասլամային կը վերագրէ Հայաստանի նուաճումն. երկրորդն՝ հակառակն՝ Սալման ի. Ռաբիայինն. ինքն հեղինակը սակայն նկատում է ստորեւ, որ Հաբիբի մասին տեղեկութիւնն առաւել արժանահաւատ կը հանդիսանայ։